

ԳԵԿՈՐԳ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒ «ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳԻՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Մշակութային գործիչների, գրողների ու արվեստագետների միջև ժամանակին եղած տևական նամակագրական կապերը, ինչպես նաև տարբեր ժամանակներում նրանց թողած հուշագրությունները շատ հաճախ հնարավորություն են տալիս ու նպաստում բացահայտելու նրանց կյանքի ու գործունեության տակավին չմեկնաբանված ու չբացահայտված կողմերը: Այդպիսիք կարելի է համարել գրող, լրագրող, խմբագիր, հրատարակախոս, հասարակական գործիչ Գևորգ Մկրտումյանի (1863 թ. Ղզար - 1915 թ. Ալեքսանդրապոլ)՝ արխիվներում պահպանված նամակները, որոնք ներկայացնում են վերջինիս գործունեության չլուսաբանված էջերը: Գործելով հիմնականում Աստրախանի հայկական գաղթօջախում՝ նա եղել է «Մշակ» լրագրի և Տիգրան Նազարյանի «Աղբյուր» ամսագրի մշտական թղթակիցը և, բացի նրանից, ողջ կյանքում թղթակցել է հայ պարբերական մամուլի շուրջ քսաներեք օրգանների (Թիֆլիս, Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան, Լոնդոն), ունեցել տասնհինգ գրական ծածկանուն*։ Նա մինչև կյանքի վերջը նամակագրական կապեր է պահպանել հայ մշակույթի գործիչների և գրողների հետ՝ Գաբրիել Մունդուկյան, Գրիգոր Ջանջյան, Ալեքսանդր Ծատուրյան, Համբարձում Առաքելյան, Գարեգին Լևոնյան, Սիմոն Հովվյան, Մկրտիչ Բարխուդարյան և այլք: Դեռևս Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցում ուսումնառության տարիներից սկսած՝ հոգու խորքում մշտապես փայփայել է Արևմտյան Հայաստանում տառապող հայ բնակչության ազատագրության հարցերը, հանդես եկել իր հեռավոր ու հալածված եղբայրներին նյութապես ու բարոյապես օժանդակելու նախաձեռնությամբ, իր արձակ ու չափածո գործերով արծարծել նրանց ազգային, սոցիալական և այլ խնդիրները: Գևորգ Մկրտումյանը 1908 թվականին ստեղծված «Հայ գրականությունը և արվեստը սիրողների ընկերության» հիմնադիրներից է ու եռանդուն գործիչներից: Նա 1908 թ. հիմնադրեց Աստրախանի «Լրաբեր» հայկական շաբաթաթերթը, ուր տպագրվեցին նրա պատմվածքները: Դրանք հետագայում լույս տեսան առանձին գրքով՝ «Զրկվածները»: 1912 թ. աստրախանահայերը նշեցին հայ գրի և տպագրության տունը՝ հրատարակելով «Հայ գրի և տպագրության մեծ տունը» ժողովածուն, ուր ամփոփվեցին Գևորգ Մկրտումյանի՝ աստրախանահայերի մշակութային կյանքին վերաբերող հինգ հոդվածները: Նրա վերջին պատմվածքը՝ «Մոտ արշալույսին» (10.01.1915թ.), նվիրված է Վանի հերոսական պաշտպանությանը: Այդ օրերին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ողբերգական իրադարձությունները ցնցում են աստրախանահայերին: Նրանք կազմում են «Եղբայրական օգնության կոմիտեու», որը փախստականներին օգնելու համար հսկայական գումարներ է հանգանակում: Գևորգ Մկրտումյանը երկու փազոն հազուստ և սննդամթերք է հասցնում Ալեքսանդրապոլ: Այս նվիրական առաքելությունը կատարելուց հետո նա Ամենայն հայոց կաթողիկոսի հովվապետական օրհնությունը ստանալու համար մեկնում է Երևան: Սակայն Աստրախան վերադառնալիս գնացրում Գ. Մկրտումյանի առողջական վիճակը վատանում է, և նրան տեղափոխում են Ալեքսանդրապոլի «Բտալիա» հյուրանոցը, ուր և մայիսի 9-ին՝ Վանի

* Տե՛ս Բ. Հովակիմյան, Հայոց ծածկանունների բառարան (8000 հեղինակի 25 հազար ծածկանուն), Եր., 2005, էջ 677:

ազատագրության օրը, կնքում է իր մահկանացուն: Գ. Մկրտումյանի դին տեղափոխվում է Աստրախան և համձնվում հողին:

Ստորև հրապարակվող «Մշակ» լրագրի խմբագիր Համբարձում Առաքելյանին հասցեագրված Գևորգ քահանա Մկրտումյանի անտիպ մամակները պահպանվում են Ե. Չարենցի անվան արվեստի և գրականության թանգարանի Գևորգ Մկրտումյան ֆոնդում: Դրանց ֆոնդային համարներն են՝ 1989, 1990, 1991 և 1992:

Հ. Գ. ՉԱՔԱՐՅԱՆ

№ 1

04 հուլիսի 1912 թ.
Աստրախան

Մեծարգոյ պարոն Համբարձում՝

Նամակս ներկայացնող պարոնը իմ հայրենակից (ղզլարցի) ուսուցիչ Գևորգ Մելիքեանն՝ է, որ ցանկանում է մի քանի խորհուրդներ լսել ձեզանից: Շատ համեստ մարդ է, իսկապես գաւառացի դեռ չփչացած, գաղափարական ուսուցիչ: Խնդրում եմ, ձեզնից կախուած օգնութիւնը չզլանաք նրան հասցնել, նույնիսկ ձեր ծանօթների եւ խմբագրութեան միւս անդամների եւ կամ մօտ աշխատակիցների միջոցով: Կարելի է դրան կապել նաեւ «Մշակ» լրագրի հետ, դա շնորհալի գաւառական թղթակից կարող է լինել. ես այդ փորձով գիտեմ «ԼՐԱԲԵՐԸ» լոյս տեսնելու ժամանակ:

Ներեցէք, որ սոյն երկտողովս անհանգստացնում եմ ձեզ: Ընդունեցէք խորին յարգանքներս՝

ԳԵՎՈՐԳ քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ
№ 1988, թ. 1: Ինքնագիր:

№ 2

23 նոյեմբերի 1913 թ.
Աստրախան

Մեծարգոյ խմբագիր «Մշակ» լրագրի
պարոն Հ. Առաքելեան

Ուղարկում եմ մի պատմուածք «Գայլերը» վերնագրով եւ խնդրում եմ տպագրել «Մշակի» ծննդեան համարում: Այդ պատմուածքը գրել եմ յատկապէս «Մշակի» համար, հետեւապէս ցանկալի է, որ լոյս տեսնի նրա էջերում: Եթէ հնարաւորութիւն կայ, ցանկալի է, որ մի համարում տպագրուի, կիսելու դեպքում՝ տպաւորութիւնը կթուլանա: Յատկապէս խնդրում եմ, օր առաջ կարդալ պատմուածքս եւ չտպագրուելու դեպքում՝ իսկոյն յետ ուղարկել, որպէսզի ինձ հասնի մինչեւ դեկտեմբերի 15-ը: Թոյլ տե՛ք նկատել, խմբագրութեանդ կողմից ընդունուած ձեւը - բանասիրական յօդածների տպագրութիւնը ուշացնել 3-5 ամիս - ձեռնտու եւ յարմար

ձեռն չէ: Շատ ժամանակ է, որ դրանց պատճառով էլ ոչ մի միտք ուղարկել չեմ կարողանում. նախ՝ որ գուրածքը իր թարմութիւնն է կորցնում եւ երկրորդ՝ գրողը ամիսներ անհամբեր տպագրութեան սպասելով, երբ իր երկը երկար տպագրած չէ տեսնում, այլեւս դադարում է հետաքրքրել եւ նոր բան գրել. մանաւանդ երբ նկատում ես, որ այդ 3-5 ամսուայ ընթացքում շատ քիչ բանասիրականներ են տպագրւում եւ դեռ քունին հերթ չի հասնում: Ընդհանրապէս պիտի նկատեմ, որ մենք հեռուոր աշխատակիցներս ւելի անտարբերութեան, թէ՞ անուշադրութեան ենք մատնած: Չարմանալի է, Թիֆլիսում եղածները երբ եւ ինչ ուզեման գրել, իսկոյն տպագրում է, իսկ երբ խնդիրը մեզ է հասնում (Գաւառացիներիս), անպատճառ հերթի պիտի սպասենք եւ այն էլ երեք, հինգ, վեց ամիսներ:

Ես հերթի յարմարութիւնը երբեք չեմ ժխտում, սակայն այդքան երկար սպասել հերթի, անկարելի է: Շատ ցանկալի է, որ աշխատակիցներին եւ թղթակիցներին գործը ւելի լաւ հիմունքների վրա դրեր եւ ժամանակակից կերպով կազմակերպեր: Մեզանից շատերը գաւառացիներից, որոնք 20-25 տարի աշխատակցում են «Մշակին», դեռեւս իրենց համար պարզ չէ, թէ իրենք ի՞նչ դեր ունեն եւ իրենց ի՞նչ վերաբերմունք է ցոյց տալիս խմբագրութիւնը: Արդեօ՞ք մի առաւելութիւն կայ մեր եւ պատահական թղթակիցների մէջ: Արդեօ՞ք մի որեւէ գնահատութիւն կամ ջերմութիւն կայ դէպի մեզ՝ գաւառացիներս: Արդեօ՞ք մի կապ, մի ուշադրութիւն հաստատել է խմբագրութեան եւ մեր աշխատողների մէջ: Յաւելով պիտի ասեմ, որ այդ կապը շատ թոյլ է. բազմաթիւ օրինակներից մէկը առաջ կբերեմ - ահա մօտ մի տարի է հրատարակեցի իմ «Ձրկածները» աշխատութիւնների Ա հատորը, որը համարեայ կազմած է «Մշակի» մէջ հիւրասիրած գրածքներիցս: 156 երեսանոց մի գիրք է, այն էլ «Մշակի» աշխատակցի գիրքը եւ այդ «Մշակը» մի տող անգամ չգրեց այդ աշխատութեանս մասին, չհաշւեց այն, որ հաղորդւած էր ստացելու շարքօն յայտարարութիւնը: Չեմ հաշւում եւ ուսուցիչ Մելիքեանի գրախօսութիւնը, որ գրքի հրատարակելուց ամիսներ յետոյ տպագրեց «Մշակում», նրա գրածքը խմբագրութիւնից միանգամայն անկախ էր եւ նա կարող էր չգրել անգամ, իսկ իմ կարծիքով խմբագրութիւնը իր պարտքը պիտի կատարէր անկախ պատահական գրախօսութիւնից:

Յարգելի պարոն Համբարձում, յոյս ունիմ, որ դուք թոյլ չէք տայ կարծելու թէ՛ ես պահանջում եմ, որ իմ աշխատութիւնս գովէիք կամ ընկլամ անէիք. ոչ, հազար անգամ ոչ. այլ ես պահանջում եմ, որ այդպիսի անուշադրութեան չափտի մատնէիք: Այլեւ պահանջում եմ, որ խիստ կրիտիկայի ենթարկէիք եւ եթէ հայիոյելու արժանի է, հայիոյէիք, քան թէ լռութիւն պահպանէիք: Դուք ինչպէս գրող, ձեզ շատ լաւ յայտնի է թէ՛ որքան շինարար ազդեցութիւն ունի առողջ քննադատութիւնը գրողի վրա եւ որքան կործանարար՝ սառնասիրտ լռութիւնը: Առայժմ այսքան:

Ներեցէք, որ ձեր սուղ ժամերը ի չարն գործ դրի, բայց կխնդրեի, այդ սուղ ժամերից երբեմն էլ բաժին հանել մեզ լսելու, որ ոչ Ստ. Մալխասեաններ՝ ենք եւ ոչ Գ. Չալխուչեաններ՝, այլ «Մշակի» համեստ աշխատատուրներ, որոնց դրութիւնը եթէ կանոնաւորէր, եթէ կազմակերպութեան ենթարկէր, «Մշակի» թէւերը ւելի ոյժ կառնէր: Բազմաթիւ, մշտասահ, մանրիկ աղբիւրներն են, որ գետ են կազմում:

Բազմաթիւ բարեմադրութիւններով - մնամ «Մշակին» հարազատ՝

ԳԵՎՈՐԳ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ
№ 1989, ք. 1-4: Ինքնագիր:

«Մշակ» լրագրի խմբագիր
Մեծապատիվ պ. Հ. Առաքելեան

Մի շատ ցաւալի եւ տխուր երեւոյթ այսօր ստիպում է ինձ գրիչ առնել եւ հարորդել ձեզ հետեւեալը. մի քանի օր առաջ Աստրախանի հայոց կօմիտեւոր Նոր-Նախիջեւանից հեռագիր ստացաւ այսպիսի բովանդակութեամբ. «Посылаем телеграфный протест Тифлисы бюро и Оризонь против вредного нашим интересам выступления Мшакь, редактор которого в тяжелую годину испытания нашего несчастного народа из личных побуждений выступает против национального бюро, состоящего под покровительством Католикоса, необходимо ваш телеграфный протест»: Մոյն հեռագիրը ստորագրել էին Ն.Ն. քաղաքագլուխ Ա. Սալտիկեան⁵, Գր. Չալխուշեան, Չորեքչեան⁶ վարդապետը եւ Գ. Չորարը⁷:

Բացատրութիւնները աւելորդ են: Հեռագրի բովանդակութիւնը արդէն պարզ ապացոյց է, թէ ինչեր են նիւթում բազմամեայ «Մշակի» դէմ եւ նոյնպէս շատ հասկանալի է թէ ո՞ր անկիւնիցն է շարտում այդ անմաքրութիւնները եւ ի՞նչ նպատակով, ուստի եւ որպէս «Մշակի» բազմամեայ աշխատակից եւ նրա շահերի նախանձախնդիր, զգուշացնում են ձեզ բարձրացող չարագուշակ, փոթորկոտ ամպերի դէմ:

Պ. Համբարձում, ի նկատի ունենալով «Մշակի» հակառակորդների ուղղութիւնն եւ տրամադրութիւնը, կարծում են, ձեր միջոցառումները վաղաժամ են եւ կորստաբեր կլինեն «Մշակի» համար, ուստի եւ ձեր փորձառու եւ լուրջ ուշադրութիւնն են դարձնում այդ խնդրի վրա: Այժմ արդարութիւն որոնելու ժամ չէ, գաւառը այլ կերպ է նայում խնդրին – նա պահանջում է համերաշխութիւն, համերաշխութիւն:

Երեւի ձեզ կհետաքրքրի թէ ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ հեռագիրը մեր կօմիտեւում: Ուղիղ երկու ժամ եւ կես խլեցին մեզնից վիճաբանութիւնները այդ առիթով: Վերջապէս քեւարկութեան տրուեց հետեւեալ բանաձեւը – միանա՞լ այդ հեռագրին թէ՞ ոչ: Ստացուեց 5 ձայն թեր եւ 5 ձայն դէմ, երկուսն էլ ձեռնպահ. այնպէս որ հարցը մնաց բաց եւ չեմ կարծում, որ նորից այս հարցին վերադառնանք:

Այսպիսի բովանդակութեամբ հեռագիր էլ ստացել էր եւ մեր պատգամատուր Արշակ Լեւիսանեանը⁸, որ նոր էր Տփլիսից վերադարձել: Հեռագրի բովանդակութիւնը ջերմ պաշտպանողը դա էր, ինչպէս երեւում էր, արդեն Տփլիսից ազդած էր վերադարձել:

Խնդրում են, նամակիս մի տողն անգամ լրագրութեան նիւթ չդարձնել: Եթէ գրեցի ձեզ, այդ ինձ ստիպեց ներկայ մեծ եւ խորհրդատու մտնեստը եւ միեւնոյն ժամանակ բազմամեայ, արդիւնատու «Մշակի» ապագան: Այսպիսի ըոպէներին նրա անունը տեսնել հակառակորդների բերնին զգգգելիս եւ վարկաբեկ անելիս, այդ մեծ ցաւ է «Մշակին» համակրողներին համար:

Սրա հետ միասին ուղարկում են եւ մի յօդած «Հայրենիքի սերը» վերնագրով: Ըստ ցանկալի է ինձ համար, որ այդ յօդածին տեղ տրի «Մշակի», եթէ կարելի է, բանասիրական բաժնում: Իսկ եթէ չէք բարեհաճի տպագրել, խնդրեմ յանձնէք պ. Վահան Դուկասեանին⁹, որը իր ժամանակին կմտնի ձեր խմբագրատուն:

Վաղուց է նոյնպէս, որ խմբագրութեանը ուղարկել են մի պատկերատու գրքւածք «Դրոշակների հանդեսը» վերնագրով, կամատորների կեանքից: Ըտապեց-

րէք խնդրեմ այդ ես տպագրել: Առ հասարակ վերջին անգամ պատկերաւոր գրութեան չեմ տպագրում, չգիտեմ, ինչով բացատրել: Տարաբախտաբար այնքան հեռու եմք եւ կտրւած, որ հնարաւորութիւն չունենք պատճառներն իմանալու, այնինչ չտպագրուելը գրողի վրա այնքան վատ է ազդում, որ մնում ես տարակուսանքի մէջ – ի՞նչ գրել եւ ինչո՞ւ գրել:

Ընդունեցէք եւ այլք

Յարգանքներով մնամ՝ Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ
№ 1990, ք. 1-4: Ինքնագիր:

№ 4

24 փետրվարի 1915 թ.
Աստրախան

Մեծապատիվ պ. Հ. Առաքելեան

Շնորհակալութեամբ ստացայ ձեր տպագրւած կոչը նոր Ազգային Բիրօ կազմակերպելու մասին Թիֆլիզում: Դուք ցանկանում էք այնպիսի ներկայացուցիչ ընտրենք եւ ուղարկենք Աստրախանից, որ նեղ կուսակցական անձնաւորութիւն չլինի: Շատ իրաւացի եւ արդարացի ցանկութիւն է եւ առաջարկութիւն, սակայն այդպիսին որտեղի՞ց ճարել: Եթէ մի քիչ խելքը զլխին եւ լեզուն բերանին մարդ կայ, նա ներկայումս անպայման կուսակցական է (աջակողմեան կամ ձախակողմեան մտքով), իսկ «վայրենի»ներ ուղարկել որպէս ներկայացուցիչ, այդ էլ աննպատակ է, ողջ մէկ է, դրանք էլ կենթարկին: Ի՞նչ եմ զարմանում վերջիններս վրա, քանի որ մեր դեկտեմբերին ուղարկած պատգամաւոր պ. Արշակ Լեւիսանեանը, որ պիտի մասնակցէր դեկտ. 25-27-ի նիստերում, այստեղից Թիֆլիզ ուղեւորելիս՝ ձախակողմեան էր, այնինչ Թիֆլիզում 7 օր մնալուց յետ՝ վերադարձաւ դաշնակցական հովերով բռնւած եւ այդ անձնաւորութիւնն էր, որ վերադարձից յետ մեր նիստում գոռում էր. «Հ. Առաքելեանի բերանի ծակը պետք է փակել» եւ մենք միայն միքանիսս իրեն բերանը փակեցինք մեր կօմիտեւում. այդ մասին արդէն ձեզ հաղորդել եմ Գ. Չալխուշեանի եւ ընկ. հեռագրի առիթով գրածս նամակում:

Լաւ տեսակիցն էր նոյնպէս եւ իմ պաշտօնակից Ս. քահ. Ասլանեանը¹⁰, որին յանձնեցինք երկու վագօն իրեր, կարիքի տեղում (Երեւան) անձամբ, իր ձեռքով բաժանել հայ փախստականներին եւ նա, փոխանակ վագօնները իր գնացքին կապելու հոգ տանելը եւ իր հետ տեղ հասցնելը, նա ճանապարհին կորցրեց վագօնները, բայց չնոռացաւ մտնել Ն. Նախիջեւան ուխտ ու երկրպագութիւն տխրահռչակ Գ. Չալխուշեանին, մի այնպիսի ժամանակ, երբ «Մշակը» արդէն երես դարձրեց իր ապերախտ եւ թեթևասլիկ աշխատակցից (Գ. Չալխուշեանից), չնայելով յիշածս քահանան իրեն մշակական եւ «Մշակի» աշխատակից է համարում եւ նոյն մեր յարգած «Մշակը» վերջինիս մասին չորս անգամ լուր տպեց, որ նա վագօններ է տանում փախստականներին: Եվ գիտէք ինչ, մինչեւ օրս դեռ հաստատապէս մեզ յայտնի չէ, այդ իրերը տեղ հասա՞նք թէ ոչ: Ես չարախոսութիւն կամ կատակ չեմ անում: Վագօնները, որոնք տէր հօր անմիջական ուղեկցութեամբ պիտի Երեւանում լինէին անցեալ յունւարի 15-17-ին, դեռ ներկայ փետրարի 12-ին հեռագիր ստացեց պ. Խնունցից, որ վագօնները նոր հասել են Թիֆլիզ եւ ուղարկեցին Երեւան: Իսկ Երեւանից 3-4 օր առաջ մեր կօմիտեւի հեռագրով հարցրին՝ դեռ պատասխան չկար. այնինչ Սարգիս քահանան երկու շաբաթից աւելի այստեղ հանգիստ սրտով եւ խղճով նստած է, չնայելով, որ դարձեալ «Մշա-

կում» մի ճոճճան յօդածով կոչ արեց, մանաւանդ Աստրախանցիներին, շուտափոյթ օգնութիւն հասցնել փախստականներին: Ահա, մեր գիտակից մարտիկը, ի՞նչ պահանջել կօմիտէտի միւս անդամներից, որոնք մեծ մասամբ «վայրենիներ»ից են բաղկացած:

Մեր հասարակութիւնը թէ Ա. Լեւիսանյանից եւ թէ մանավանդ Ս. քահ. Ալանեանի վարմունքից շատ անբաւական են: Այդ զգաց եւ հասկացաւ մեր կօմիտէտը, ուստի եւ զանազան պատրուկների տակ փետրուարի 19 Թիֆլիզի համագումարի համար ներկայացուցիչ շընտրեց իր անդամներից, այլ իր ձայնը յանձնեց պ. Մ. Պապաջանեանին¹, ներկայ լինելու համագումարին Աստրախանի կողմից, թէւ նրանիցն էլ դեռ երկար պատասխան չէր ստացում:

Շատ ցատում եմ, որ ես չկարողացայ ձեր առաջարկած ցուցակից թեկնածուներ առաջարկել, որովհետեւ երեք շաբաթ էր, որ տկար պառկած էի, տնից չէի դուրս գալիս, հետեւապէս բացակայ էի վերելիչւած միտից, թէւ կօմիտէտի կոչնագրի վրա առաջարկել էի պ. Բ. Իշխանեանին: Այսպիսի առաջարկութիւնը ի՞նչ միտք ունէր, քանի որ անձամբ չէի կարող առաջարկել կամ համախոհներ պատրաստել, ուստի ներողութիւն եմ խնդրում, որ ինձնից անկախ պատճառով անկարող եղայ ծառայութիւն մատուցանել, այժմ ապաքինում եմ, ապագայում պատրաստ եմ ձեր յանձնարարութիւնները կատարել: Վերջացնելով նամակս, խնդրում եմ անտես չառնել իմ «Հայրենիքի սերը» յօդածը, որը բաւական ժամանակ է ուղարկել եմ, բայց դեռ լոյս չէ տեսել:

Յարգանքներով՝ Գ. քահ. ՄԿՐՏՈՒՄԵԱՆՅ

Յ. Գ. Հաճեցէք «Մշակում» իբրեւ լուր տպագրել, որ մեր կօմիտէտը որոշեց եւս եկու վագօն ալիւր ուղարկել հայ փախստականներին Երեւան եւ Հին-Նախիջուան, նոյնպէս եւ 1000 ռ. Վ. Կաթողիկոսին՝ դարձեալ փախստականների համար:

Պ. Համբարձում, ծրարունս ներփակած ուղարկում եմ եւ մի ոտանաւոր «Ընկերներին» վերնագրով. այդ ուղարկում եմ «Մշակում» տպագրելու: Նման բովանդակութեամբ ունեմ մի շարք ոտանաւորներ, որոնց հաջորդաբար կուղարկեմ «Մշակի» համար: Իսկ ժողովածուի համար ուղարկել եմ երեքը պ. Յ. Սօլովեանի² միջոցով:

Ժողովածուի տպագրութեան խնդիրը պիտի թարմ պահել ընթերցողների յիշողութեան մէջ, ուստի շուտ շուտ այդ մասին պիտի խօսաւ «Մշակում»: Շուտով մի արձակ գրածք կուղարկեմ ժողովածուի համար, պէտք է շտապեցնել տպագրել:

№ 1991, ք. 1-4: Ինքնագիր:

Ծանոթագրություններ

¹ Առաքելյան Համբարձում (1855-1918 թթ.) – գրող, հրապարակախոս, «Մշակ» լրագրի՝ սկզբում քոլբակից, ավելի ուշ՝ խմբագիր-հրատարակիչ: 1906-1907 թվականներին եղել է Պետական դրամայի պատգամավոր: 1917-ին հիմնել է Հայ ժողովրդական կուսակցությունը: Նա կազմել է հայ կենսագրական, տեղեկագրական բնույթի հանրագիտական բառարաններ: 1910-1912 թթ. հիմնած «Արոր» պատմագիտական հանդեսի էջերում արտացոլել է Արևմտյան Հայաստանում տառապող հայության կյանքը: 1915-ին կազմել է գլխավորել է հայ գաղթականներին օգնող հանձնաժողովի աշխատանքները: 1918 թվականի հուլիսի 6-ին սպանվել է իր բնակարանում:

² **Մելիքյան Գևորգ** – Ղզարցի մանկավարժ, լրագրող, տեղի հայկական ծխական-եկեղեցական երկդասյան դպրոցի ուսուցիչ, Գ. քահ. Սկրտումյանի գործընկերը, «Մշակ» լրագրի թղթակից:

³ **Մախասյան Ստեփան** (1857-1947 թթ.) – ծնվել է Ախալցխայում, քանասեր, լեզվաբան, բառարանագիր, 1943-ի ՀՀ ԳԱ հիմնադիր անդամ:

⁴ **Չախուշյան Գրիգոր** (1861-1931 թթ.) – մշակութային ու հասարակական գործիչ, քանասեր, Մոսկվայի Լազարյան ճեմարանի ընթացավարտ, իրավաբան, Նոր Նախիջևանի քաղաքային դումայի անդամ:

⁵ **Մալտիկյան Ա.** – Նոր Նախիջևանի քաղաքագլուխ, մասնագիտությամբ բժիշկ, եկեղեցական հոգաբարձության նախագահ: 1915-ին նա անձամբ եղել է Էջմիածնում և օգնություն կազմակերպել փախստականների համար: Նրա աջակցությամբ հայ հասարակությունը Նոր Նախիջևանում կազմակերպում է որբանոց և իր վրա է վերցնում 250 որբերի խնամքը:

⁶ **Չորեքչյան վարդապետ** (1868-1954 թթ.), հետագայում Ամենայն հայոց կոթողիկոս **Գևորգ Չորեքչյան** – հոգևորական, կրթական գործիչ: Ծնվել է Նոր Նախիջևանում, ավարտել է Գևորգյան ճեմարանի դասընթացը և երկար տարիներ (1894-1913 թթ.) պաշտոնավարել է այստեղ և Նոր Նախիջևանի թեմական դպրոցում:

⁷ **Չուբար Գևորգ** (1864-1930 թթ.) – գրող, հրապարակախոս, Մոսկվայի Լազարյան ճեմարանի ընթացավարտ, Նոր Նախիջևանի խորհրդարանի անդամ, տեղի քատերական կոմիտեի նախագահ, աշխատակցել է «Ալբյուր» և «Տարագ» ու այլ պարբերականների, թերթերի, ինչպես նաև Փարիզի «Անահիտ» հանդեսին:

⁸ **Լևխանյան Արշակ** (1879-1943 թթ.) – աստրախանահայ մշակութային ու հասարակական գործիչ, Աստրախանի հայկական օրիորդաց ուսումնարանի և Տղայոց եկեղեցական-ծխական դպրոցի հայոց լեզվի և երաժշտության ուսուցիչ:

⁹ **Ղուկասյան Վահան** – աստրախանահայ մշակութային ու հասարակական գործիչ, լրագրող, Աստրախանի «Բանբեր» հայկական լրագրի խմբագրական խորհրդի անդամ, Գ. քահ. Սկրտումյանի գործընկերն ու մտերիմը:

¹⁰ **Ասլանյան Մարգիս** քահանա – աստրախանահայ մշակութային և հասարակական գործիչ, Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի ընթացավարտ, Աստրախանի հայկական դպրոցների կրոնի, հայոց լեզվի և երգեցողության ուսուցիչ, «Լրաբեր» թերթի թղթակից: 1943-ին բռնադատվել է կեղծ մեղադրանքով և մույն թվականին ազատվել է կալանքից Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Չորեքչյանի՝ Գերագույն խորհրդին ուղղված խնդրագիր-միջնորդության հիման վրա:

¹¹ **Պապաջանյան Միքայել** (1868-1929 թթ.) – Պետական դումայի պատգամավոր, իրավաբան, հարել է կադետներին:

¹² **Սողովյան Հովակիմ** (1863-1919 թթ.) – ծնվել է Թիֆլիսում: Աստրախանի Աղաբաբյան ուսումնարանի սան, հասարակական ու մշակութային գործիչ, գրող, լրագրող, «Լրաբեր» թերթի թղթակից, երկար տարիներ մանկավարժական աշխատանք է կատարել տեղի Աղաբաբյան և Օրիորդաց ուսումնարաններում ու Հայկական ծխական դպրոցներում՝ դասավանդելով մայրենի լեզու: 1898 թվականին Մոսկվայում հրատարակվեց Հ. Սողովյանի «Կոտրված սիրտ» վեպը: 1908-1918 թվականներին եռանդազին մասնակցել է Աստրախանի «Հայ գրականությունը և արվեստը սիրողների ընկերության» աշխատանքներին:

А. Г. ЗАКАРЯН – *Письма Геворка Мкртумяна редактору газеты “Мшак” Амбарцуму Аракеляну.* – Писатель, журналист, общественный деятель Геворк Мкртумян в письмах, адресованных редактору газеты “Мшак” Амбарцуму Аракеляну, выражает желание опубликовать свои литературные произведения в газете и привлечь к себе внимание уездных корреспондентов, а также пресечь провокационные выступления против газеты “Мшак” со стороны своих идеологических противников.